

# ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱ. ԱՌԻԹԱԿՈՆ - ԳԻՏԱԿՈՆ - ԲԱ. ՔՈՅՉԱԿՈՆ

Թ 334-Թ 337

ՀԱՏՈՐ

ՏԱ.



1924

ՀԱԿՏԵՄԵՐԵՐ

Թ Ի 10

Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱ. ԱՌԻԹԱԿՈՆ

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԱ. ԱԿԱ. ՓԱ. Պ

(Հերթումն Հորոյի Համելուկներուն)

◀ ◁ ▶

(Շաբ. տես Բազմավէպ 1924 էջ 289)

ՈՒՂԱԿԴՐՈՒԹԻՒՆՔ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ :  
1830 տ. — (Էջ 302) « Խակ զոգուցն զի՞նչ ասացից... սոսկումն բեմբին, արհաւիրք դատաստանին... անողորմ առնշանց, հոնցը վառեալը.... որ կան և պահին ի պահանջումն ամենայն մեղաւորաց և արքիցողաց » : Մենց ուզդեր էինք. ի պապականմէն: Աւրիշ կերպ չէր կարելի այնքան ահազին և սոսկալի նկարազրի առջն: Այսիդ դատաւորի առջն մեղաւորներն ամօթալից ի՞նչ պատասխան կամ արդարացումն կրնան գտնել, երբ ասելու ըլլան « Լերանց թէ անկերուց ի վերայ մեր և բրոց թէ ծածկեցէց զմեզ » (Ղոկ. իդ. 30) եթէ ոչ կարկին, համրանան, լեզունին կապուի, պապանձին: Քիշստոս ինքն է խօսողը այն հրաւիրեալի հետ, որ եկեր էր հարսանիք առանց վայելուչ զգեստի: ինչ-

պիսի՛ ահաւոր զէմբ առած է Ցէրն՝ որ չկրցաւ ճիկ մը հանել. « Ընկեր զիարդ մտեր այսը, և նա պապանձեցաւ: (Մար. թի. 12):

Ուրիշ անգամ Ցէրն կը սաստէ զիւին. « Պապանձեաց, և ել ի զմանէ ». (Ղոկ. Դ 35): Նոյն խակ երկրաւոր թագաւորի առջն վասակի պէս մարդուն՝ ահէն ամօթէն լեզուն կապուեցաւ. « Պապանձեցաւ և չգտաւ բան ի բերան նորա » (Եղ. է. 159): Ուստի Հորոյ պէտը է խոստվանի, որ « պարզ և ուզիդ դատողութիւնը կը ցուցնէ » թէ լաւագոյն է՝ պահանջումն փոխելու հարկին՝ նորա տեղը փոխանակել պապանձուն և ոչ երբեք « ի պատուհան »: Ասացի եթէ ՀԱՅ կ. վասն զի եթէ մանր միտ զրուի, պահանջունն երկու բառի կը բատումէն (syncope) կազմուած է, այս-

ինքն պահին» և [Տանջումն բառերից : Ընդօրինակողի մոտքի ցըռումից յառաջ եկած է, յետ զրելու պահին, մերենարար զրած է ՊԱՀ և դուրս ձգելով Տ կցեր է ԱՆՁՈՒՄԻՆ, որով եղեր է պահ'(տ)ահճամն սիրուն կոկի հայերէն բառ մը և ոչ շատ հեռու զրական իմաստէն և փոքր ի շատէ յարմար տեղույն: Եւ ուղիղ զատողութիւնը կը պահանջէ որ տանջումն լինի. նոյնպէս վերջի զատաստանի և անոր հետեւորդ պատժմերու նկարազորութիւնը և զդոխքի տանջանքներու միտքն և զաղափարը, Ա. Հարց զրուածներուն մէջ, կախուած է Մատթէոս Աւետարանչի զրածէն, որոյ թելազրոցն ինքն Տէքն է և ահեղ զատաւորն: «Յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրց... Եւ կացուացէ զոդին ընդ աջմէ իւրմէ՛ և զայժիսն ի ձախմէ՛... Եւ ասասցէ ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. Երթայց իինէն անիծեալը ի հորին յախեենական... ։ ։ Եւ երթիցն նոքա ի ՏԱՆՃԱՆԱՆ յաւիտենական» (ԽԵ. 31-46):

Մանդակունին իւր ճառերու մեծագոյն մասին մէջ կը խօսի վերջին զատաստանի և զժոխքի տանջանքներու վրայ և միշտ Աւետարանի խօսերով, որով յիշեալ պարբերութեան մէջ «ի պահանջումն» եղած է անպատճառ ի տաճումն: Արդարեւ անդէն իսկ երկիցս կրկնուած է. «զառն զատաստանն, անողորմ տաճեալն» ։ ։ ։ Եւ եթէ մարթ էր ցուցանել յանդիման, աստէն իսկ ի տաճան» ։ ։ ։

Ի հաստատութիւն մեր կարծիքին և ուզգազրութեան՝ յիշենք շատերէն մի քանի օրինակ ևս այլկայլ ճառերէ:

Էջ 12. ա. 29. Ոչ ողբով սրբեմք զգառն թարմին մեղաց. . . . զոր եթէ սա որ ոչ բժկէ աղօթիք, պահօք և ողորմութեամբ, անդ անդ հորիք առաջի կայ. . . . և ահազին արհաւիքք աներիի տաճչանաց»:

Էջ 42. ա. 5. Նկարագրութիւն վերջին դաստանան. «Այս է անողորմիցն անողորմ զատաստան և տաճչանք անեներիիք, զոր և անողորմ մեծատունն ընկալաւ՝ անդ հրոյն խորութուն և զանեներիի տապակին»:

Էջ 129 ա. 15. Ցոգոց հան և ողքա, հեծեա և լաց անդապար, զի թերևս ապրել կարիցես

յահեղ աղէտիցն տանչանաց և յանչոյլ խաւարէն»:

Էջ 181. ա. 11. «Արդ ած զմուա զահեղ զարճարիս ահազին աւորս այնորիկ, և մի ընդդէմ ինչ կամացն Աստուծու առնիցես, զորս յետ սովուալի ատսնին այնորիկ մատնեսիցն աղէտիցն տաճչանաց» . . . . Եւ զուրս հրացան կայծականց հնոցին՝ ուր տանջին և մային մարմինք մեղաւորցն ի խորս տարսուասացն և յանչոյլ խաւարն . . . և զահեղ ուրութն անեներիի տաճանացն»:

Էջ 183 ա. 9. «Երկիր ի սոսկալի բեմբէն և յահազին գիմաց զատաւորին . . . . Փութա զնա հաշտեցուցանել. զարհուրեա ի չարաչար տաճանացն և յանչոյլ խաւարէն»:

Էջ 188 ա. 19. «Եւ յօր ահեղ դատաստանին . . . . Քանի՞ զուքք սրդնալիցը սպառնացեալ են և բազմութիւնք տաճչանաց . . . . ուր են ահեղ արհաւիքք և լալ և ողբալ անդադար»: . . . . Եւ յանժամ պատիցն զեեզ արհաւիքք սովուալի ահն ատենին և երկիր տարակուսանց չարաչէտիցն տաճչանաց»:

Էջ 200 ա. 2. «Վասն այդորիկ և հոր գենենին և աղջամուղջն յափանից և տաճանակն մշունջնաւորդ»:

Եթէ Հորոյ կարողութիւն ունեցած ըլլար այս անզրագարձութիւններն ընելու՝ իւր աղիսաւորոյց «ի պատուհաս»ի բացասրութիւնները տալու չէր ստիպուեթ. Եւ ողբալի մտայնութեամբ ևս պարտազրելու «(Սրբազրել անպատճառ (ընդգծ. մերն է) նոր տպագրութեանց մէջ, եթէ երբեց տեղի ունենան ասկէ վերջ)»: օ. ։ օ. ։ Կ'երաշխաւորենց «ի պատուհաս» ձեզի՝ որ նման իմակամիս «ուղղագրութեամբ» երբեց տեղի պիտի չունենայ ո՞ր և է տպագրութիւն: Հորոյի սիգապանն զատավճիոր (verdict) միտո ձգեց իմ հայրենակից և միբելի բարեկամ հանգուցեալ Աշուղ Ճիւանու հետեւալ տողերը.

«Աշուղ Ճիւանին» կաղ իշով քեարվան է մտել, ինելիյն աշեցէք:

(Էջ 303): «Զի իմաստնոյն և ջուրն միայն բաւական է ի դաղարութն ծարաւոյն և ի պէտու խելացն զուարթութեան. քանզի զուարթ են, ասէ, խելք ջրաբբաց և ա-

սողջ են մարմինց ուժակերաց »։ Մենք ուղած էինք, նկանակերաց կամ հացակերաց։ Այսպէս գրելու պատճառն է նախ՝ որ հեղինակս կ'ըսէ, թէ զուարթ են խելք չուր արրողաց, ուրեմն մարմին ալ զուարթ պահելու համար հարկաւոր է միայն կենսական հացը։ Եւս Քրիստոս իրեն ետևէն զնացող ժողովուրդը կերակրեց հացոյ։ Չուրն ալ անցուշտ պակաս եղած պիտի չըլլայ։ Մանդակունոյ ճառը « Պահոց պնդութեան » վրայ լինելով, բնականարար ի նկատի առած է զիխառապէս անապատականները, ճգնաւորները, անոնց օրինակով յորդորելու ժողովուրդը պահեցողութեան, արդ Հարանց Վարքին յայտնի է անոնց անցուցած կեսանքը և անոնդը, որ էին բանջար, ունդելէնք, պտղելէնք, բուսական արմորիք։ Առ այս՝ փափկակերութենէ զգուշացնելով ժողովուրդը և չզեղխելու համար կը թելարք զինիի տեղ՝ չուր խմել և ՏԱՓ կերակուրներու տեղ՝ ՊԱՀ, որ է ընդելէնք, որով մարմինը ունդակերաց առողջ կ'ըլլան։

Հոս հարկ կը համարիմ կարգել մի քանի օրինակներ թէ ինչո՞ւ համար նախընտրած եմ ունդակերացը (բան « Նկանակերաց կամ հացակերացը ») որ համամիտ գտած եմ բնազրի ունդակերացին։ Նախընազրին։

« Սովին պահոցն պնդութեամբ է երեք մանկութեան ապրեցան ի բորբոքեալ բոցոյն և շիշուցին զմուլութին կերակրոցն ցանկութեանց, և սակաւ ինչ ոսպամիք շատացան (էջ 19)։ « Ումանք սակաւ ինչ ընթափի ժուժէկալէն կամ կերակրէին »։ « Ումանք խոզարուտ եղէրնամ միայն գտազնապ քաղցին դադարեցուանէին » (էջ 20)։ « Ումանք լոկով բանջարով, ումանք ընդույ միայն շատացան » (էջ 25)։ Դրսէն։ « Անդակերս, զգաստացեալս, պարկեցականս » (Ազաթ.)։ « Տացեն մեզ ունդը և կերիցուք։ Տայր ունդս չորեցուոց մանկանցն » (Դան. ա. 12, 16)։

Ծնդեղէնները սննդարար են և առողջարար և պաղ կ'ուտառին, այսինքն ՌԵՇ յորմէ ՈՒՆՑԱԿԵՐԱՅՑՆ։ Հորոյ չէ հանած մեր ուղղագրութեան և կը զրէ։ « Բատ իս (!) պարզապէս պիտի ըլլայ բուսակերաց, որուն

մէջ կը բովանդակին նաեւ ունդակերը »։ Հորոյ քանի մ'անգամ կը սխալի ա. բուսակերաց բառ չկայ, բոյս արմատէն կերտուած, որ է բուսնումն, ծնունդն, ծիլ ու ծիլն ու շարժումն կանաչանալն կը նշանակէ. թ. բուսականութեան մէջ « կը բովանդակին » բուսական քագաորդիմք Règne névégal. — յորում Հորոյի հըրամցուցած « բուսակերաց »ի « մէջ կը պարունակուին նաեւ խոզերու կերածը. փորձուած է արդիօք, թէ կրնայ մարսել մարդուս սսամբըսը. գ. Հորոյ « իր սահմանափակ խելքով » Ուծակերացի տեղ բառ մը յարմարցուցեք է, առանց ուսումնասիրելու որպէսն այդ բառին, և ի նպաստ իւր « Բուսակերաց »ին չըերելով Մանդակունին որ և է փաստ մը։ Անմանափակ միտք մը ինչ կարող է մտնել մատնազրին մտքի, խորը։ Մանդակունին համեմատութեան կը զնէ ՏԱՓ և ՊԱՀ, կերակուրներու միոյն վլասակարութիւնն և միւսի օգտակարութիւնն. ոչ միայն նիւթապէս մարմնոյ առողջութեան համար, այլ առաւել բարյական սրբութեան և առաջինութեան համար։ Ուստի առ աշխարհասէրս և մարմնասէրս, bons vivreurs կ'ըսէ. « Փանզի որ համահամօցն փափկանան, նա և զմորհուրդ ազգի ազգի իմաննան. . . . եւ որովայնց աղրով կերակրոցն փափկացեալը խորհուրդս ազտեղիս բերեն ի վեր հանապազ»։ Խսկ ՊԱՀ, կերակուրներու « ուժակերաց » տուած օգուաներն են « Փարկեշտութեան առաջինութիւնն, որ պարաւանդեալ զազարեցուցանէ զամենայն անդամա մարմնոյն յանդէպ ցանկութեանց և յազտեղի խորհրդոց, և ստէպ ստէպ հալածէ ի մտացն խորհրդոց զյարձակումն դիւաց՝ որք կամին պղտորել պղծել զիրտս մարգեցելոյն»։ Եւ այսպէս կարող էինք երկար շարունակել վկայութիւնները։

Ուստի, բայ իս, թող ներեն ընթերցողը, բնազրիը փոխելու բնաւ կարիք չկայ, վասն զի եթէ իմաստունն պաղ շուր խմելով՝ միտքը պայծառ, խելքը զուարթ կը պահէ. « Փանզի զուարթ են խելք չըարքաց »։ նոյնպէս Պաղ կերակուրները՝ կե-

բողնիրու ստամբուլ թէթէ և մարմինն առողջ կը պահեն. կողջ միտք, յողջ իրան, mens sana in corpore sano. «Եւ են առողջ մարմինք ոյժ կամ ուժակերաց»: Ոյս անսամբլ սեղանի օրինակն առաւ ինքն թրիստոս, կերպելով անապտին մէջ հազարաւոր ժողովուրդ, թող զկանայս և զմանկտի, լոր ու ցամար գարեղն հացով և տառիխով. «Զի և Զէրն ամենայն արարածոց այսպիսի սեղանովք յազեցուցանէր զժողովուրդն յանապատին, և զդինի ամենեւին ոչ յիշեաց. զի օրինակ ամենայն աշխարհի էր լինելոց ձաշն թրիստոսի»:

(Էջ 304) ՎԱՐՄ ԶԱԽՆԵԼՈՅ ՍԵՐ ԲԱՐԵԿԱՆԱՌԻ ԹԵԱՅՆ ԸՆԴ ԹԵՆԱԱՄԻՒՆ ԱԱՏՈՒՆՈՅՑ. «Որ զհրաման Հոգուոյն և զպատուիրանն Աստուծոյ արհամարհնեն ..... և զի անսուրը վարիւք և... պղծեաց և կորյոյ զսուրը աւազանին զսրութիւնն... և կամ պղծեցաւ ընդ անօրէն շնութեամբ, աղտեղեալ, և կամ զազիր և զարշելի անկոնեօք ամուսնութիւն կտակելով զօրէն խոզի ընդ ցիխ և ընդ տիզմ թաւալեալ, այնպիսին եթէ եղրայր իսկ իցէ և կամ քոյր և այլն... նզովեսցի և մերժեսցի ի սիրոյն.... փոխանակ զի դարձաւ յետս ի ֆրիստոսէ»: ... — Մինք կասկերվ ուղղած էինք կատարերիվ, բայց տարակու սական կերպով, բանզի «կասկել» բառի նշանակութիւնն շատ անորոշ է. սեղէն դատելով կը նշանակէ անօրէն շաղաշարութիւն: Մինչ ըստ զրական լեզուին՝ պէտք էր ասել ամուսնորդին կտապել, կատարել, հաստել և այլն. վասն զի արդէն նախընթացապէս այդ տիպի ամուսնութեան յարմար ածականները կու տայ «զազիր և զարշելի», անոր համար ոչ սուրը է և ոչ պատուական է այդ անկողինն, այլ երկու մեղակիցներն՝ «զօրէն խոզի ընդ ցիխ և ընդ տիզմ թաւալեալ»: Հետեւապէս արժանի է, զի «Նզովեսցի և մերժեսցի... փոխանակ զի դարձաւ յետս ի ֆրիստոսէ, և եթուց յաւազանն և հաւատաց անօրէն խարէութեան սատանայի».

(Էջ. 143): Վիճելի պարբերութիւնը մենց կարցացած ենք: «Եւ կամ զազիր և գարշելի անկողինք ամուսնութիւն կասկելով՝ (բութ կամ ստորակէտ) զօրէն խոզի և ընդ տիզմ թաւալեալ»:

Մեր մատենազարանի մի այլ նօտր ձեռագիր, թ. 8. Ծ. Նոյն տեղը ունի այս տարբերակը, աւելի հասկանալի համրակ ընթերցողին. «Եւ կամ զործեալ է ընդ ամուսնոյ իւրաչար և անօրէն գործ. (միջակէտ) իրբեւ զիոզ ընդ տիզմ թաւալեալ<sup>1</sup>»:

Յառաջ քան զՄանզարանին՝ Ա. Պօլոս կը գրէ. «Մորք է անկողինն, պատուական է ամուսնութիւնն, բայց զշունս և զպոնիկ դասի Աստուած» (Երր. ԺԴ. 4). վասն զի շնութիւն և պասնկութիւն արք և ալիդմ համարուած է, յորում խոզի պէս կը թաւալին մեղանչողներն, զոր եթէ լոււանսա մաքրես՝ զարձեալ ընդ զայր և ընդ տիզմ կը թաւալի բնածին բերմածը, Ռւատի իրաւամբ կը գրէ նաև Ա. Պիերոս (Լամբող, թ. Թվղթ. Հ. 22). ամուսնական անկողինը պազունկերուն. «Եկեալ ի զէպ նոցա ճշմարիս առակին զգօննութեան, եթէ շուն զանայ անդրէն ի փսխած իւր, և ԹՊ. ՅԱԿԱՅԱԼ՝ ԸՆԴ ՏԻԼՄ ԹԱՎԱԼԵԱԼ»: Մինչդեռ Հորոյ, ինչպէս միշտ, բնագիրը շնասկանալով ու կիտազորութիւնը փոխելով՝ տարօրինակ իմաստ մը կը հանէ այսպէս: «Ամուսնութիւն կասկելով զօրէն խոզի» (բութ կամ ստորակէտ) ընդ ցիխ և ընդ տիզմ թաւալեալ ։ Եւ սիգապանծ ոնով մը կը գրէ. «ըստ իս (!) շատ հանդիմաւոր իմաստ ունի այդ բառը խոզի մը ընթացքը որակելու համար»: Եւ սակայն բանական մարդուն անհասկանալի կը մնայթէ ինչ աեսակ խոզ է, որ ընդունակ է ամուսնական անկողինն մտնել, որու «հանդիմաւոր իմաստը» միայն Հորոյ կը հասկանայ: Մինք մեր տգիտութիւնը հրապարակաւ կը խոստովանինք, յաղթուած համարելով Հորոյի ամենիմաստ զիտութենէն «խոզի մը ընթացքը որակելուն մէջ»:

1. Զեռ. Խօտր. Էջ 62 - գ. գ.:

**Վերաբան.** — Մենք մեր Առզագութեանց թեանց Նախարանի մէջ գրած էինք. «Թերեւս նախնաց ամէն մի ընթերցող ուզէ նախնի մատենազգին հետ իր աչքին առջև այս ուղղագրութիւններն ալ ունենալ, զանոնց բնագրին հետ կարգալու, բննադասելու և նորանոր անդրագարձութիւններ ընելու համար»: Այս պարագային՝ պիտի ամբողջացնէ նա մեր գործը.... ինչպէս արդեալրեց ցոյց կու տան զբոյկու վերջին յաւելուած թղթակցութիւնները, որոնց ցննական պայքարէն գուրս՝ ամերի բան մի չեն ասեր: Սակայն Հորոյի ոճն յայտնի եղաւ իւր գրած վերնազիրէն: «Իրական կոփամարտ, Դրական հանելուկներ», որոնց զմեզ գրական և զիտական պատշաճութենէն երբեմ ակամայ զարտուղել ստիպեցին: որք եթէ առ ժամն կոփամարտից տրտմեցուցին, սակայն խրատն յուսնոնց պապագային օգտակար ըլլայ: իսկ մենք ներկայ պայքարի մէջ հասու լինելով Հորոյի «ըննազատելու և նորանոր անդրագարձութիւններ ընելու» անլնդունակութեան, իրեն հետ ընդ միշտ կը դադարեցնենք, մեր «Մատենազրական հասկացազներու շարունակութիւնը»:

#### Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

8. Գ. — Հորոյ մեր Առզագութեանց հետ վերջացընթիւ իւր եղանակները և ուրիշ բան չունենալով դուռը՝ կարացինք որ կը յայտարքէ «Փող. Զայնը» Ձ. Տ. 1844 թիւի մէջ, թէ կը զարգացնէ իւր զարկան պայտարք Միեթ. Հայութու հետ:

Յիբափ Հորոյի միայն այս վերջին մատենթիւնն է դաշտական:

#### ՆՈՒԱԳԻԱՀԱՅԱԴՐԱՄԱՆ ՄԸ

Անզիկոյ մէջ տեղի ունեցեր է անթել հեռաձայնակ տարօրինակ նուազահանդէս մը, յորում երգիչներն եղած են կենանիներ: Ամենէն առաջ լսուած ծն էշերը, ինայո պահ մը զանազան սեանք թուուններու երգերն վերջ՝ Կարգը եկեր է բորնիներու նուազահանդէսն աւարտիր է փոկերու քարտետո-ով մը:

Քիչ ատենէն երրուացի ամարկուներ պիտի կարենան նոյն միջոցով լսել նաև նիփակարայի չըվէժի գահապիժման մոնշիւնը:

#### Ա. ԱՐԵԱՆԱԳՈՎԵԱՆ ՄԱՏԵՆԱՐԱՐԱՆ

#### ԳՐՉԱԳԻՐ №. 36

ԱԻ Ե Տ Ա Ր Ա Կ

○ ○ ○

**ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳՐՉԱԳԻՐ.** — Մեծուրիմ՝ 34՝ 24. հաստ. 10 հարիւրդամեղր. կազմ՝ տախտակեայ, կաշէպատ, խորանազարդ. ենիր՝ ընտիր մազազաթ, թեր՝ 406 (812 էջ). դրաբիւն՝ խոշոր երկաթագիր, երկսիւն, նկարներ՝ էջ 1-13 գունագեղ նկարներ վրիստոսի մարդեղութեան և այլն. այնուհետև մի քանի խորաններ. մերան՝ սե. Աւետարանների սկզբնաւորութիւնը մանրանկար զիմատառեր, և մի քանի տող ոսկեզօծ երկաթագիր: Լուսանցքներում՝ մանրանկար զարգեց, թռչուններ և չորս աւետարանիների նկարները:

Գրչափիրը շատ լաւ է պահպանած, բայց եզերքներից ցեցը կերել է:

124րդ թերթի երկորդ երեսի վրայ (էջ 248) նկարւած է Մարկոս աւետարանիչը (ամրող երեսի կէս մասը), իսկ ներքեց, երկորդ կիսում՝ մի Հոյ իշխանի և իւր տիկնոց նկարը, որ անկասկած Պատրիս բանադրն և իւր Ցղայ տիկինը կը ներկայացնէ. թէկ երկու նկարները բաժանող մէջ տեղի կարմիր շրջագծի վրայ և մելանով գրւած է բոլորազիր «զկարապետն և զիտուկանն ստացող աւետարանիս յիշեսնիցի», սակայն յիշեալ կարապիտը Աւետարանի երկորդ ստացողն է հայոց չն (770) թիւն, ինչպէս կ'երես 14-րդ թերթի յիշատակարանից:

Աւետարան գրւած է ԱՊԵ - 685 (= 1236) թիւն, ոմն իգնատիոսի ձեռքով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ (403 թերթից և սկսամ)

«Փառք Այմենասուրբ երրորդութեանն, Հաւը և Որդւայ և Հոգոյն Արքոյ որ զաւրացայց զտկարս իկնաստիոս աւարտել զա: Այլէն՝»:

1. Խոշոր երկաթագիր: